Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՅ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ավտոբուսներով ուղևորների և ուղեբեռների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային երթուղիների համար՝

NN ը/կ	Երթուղու				Անհրաժեշտ ավտոբուսների թիվը (ըստ տեղատարողության)	
	անվանումը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային)	փաստացի	պահուստային
1.	Գավառ-Չելյաբինսկ	Երևանի «Կենտրոնական» ԱԿ	Չելյաբինսկի ԱԿ	ավտոբուսային	2	1
2.	Երևան-Տվեր	Երևանի «Կենտրոնական» ԱԿ	Տվերի ԱԿ	ավտոբուսային	2	1
3.	Երևան- Թեհրան	Երևանի «Կենտրոնական» ԱԿ	Թեհրան ԱԿ	ավտոբուսային	2	1
4.	Երևան- Թեհրան	Երևանի «Կենտրոնական» ԱԿ	Թեհրան ԱԿ	ավտոբուսային	2	1

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1) Հայտ.
2) ավտոբուսների հաշվառման վկայագրեր.
3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, աշխատանքային գրքույկներ.
4) ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
5) սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման վկայական և ավտոտրանսպորտային միջոցի վրա

տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման վկայական.

6) փակ ծրարով ներկայացվող՝ երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փոխադրման գինը.
7) տեղեկանք տարածքային հարկային մարմնից:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ ***2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 14^{00}-ին, ք. Երևան, Հյուսիսային ավտոկայարան, գ. Վերին Պտղնի, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:***

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը՝ ***Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ն, մինչև 2026 թվականի օգոստոսի 21-ը:***

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ 010-511-356: